դագոյն քարով: Այդ պատկառելի անձնաւորութիւնը միացնում էր իր մէջ կրօնաւորի անձնաւորութիւնը եւ իշխանաւորի փառահեղութիւնը:

— Ի՞նչ լեզուով կարող եմ ձեզ հետ խօսել, պարոն բժշկապետ, — հարցրեց սրբազանը, — ես դժբախտաբար եւրոպական ոչ մի լեզու չգիտեմ:

— Ես արեւելեան համարեա բոլոր լեզուներով խօսում եմ, բացի հայերէնից, — պատասխանեց Ասլանը տաճկերեն լեզուով:

— Այդ շատ լաւ է, որ եւրոպացիք, երբ գալիս են դէպի մեր կողմերը, գիտեն տեղային լեզուներ. դա միջոց կը տար նրանց աւելի լաւ ծանօթանալ երկրի հետ: Բայց դուք, պարոն բժշկապետ, որպէս ինձ ասեցին, եկած էք մեր քաղաքը գլխաւորապէս բեւեռագիրները քննելու նպատակով. առանց հայերէն գիտնալու, իմ կարծիքով, դժուար կը լինէր ձեզ որեւիցէ գաղափար կազմել մեր բեւեռագրերի մասին:

— Ձեր նկատողութիւնը բոլորովին ճիշտ է, սրբազան հայր, բայց ինձ անծանօթ է հայոց միայն կենդանի բարբարը, որով այժմ խօսում են, իսկ հին լեզուն ես բաւականաչափ ուսումնասիրել եմ:

— Ներեցէք, խնդրեմ, իմ անտեղի հետաքրքրութիւնը, որտե՞ղ սովորեցիք այդ լեզուները:

— Ես բաւական ժամանակ եղել եմ Հնդկաստանում, այնտեղ սովորեցի պարսկերէնը եւ հայոց հին լեզուն. յետոյ ապրում էի Եգիպտոսում, այնտեղ սովորեցի արաբերէն եւ տաճկերեն:

— Դա մի մեծ հարստութիւն է — այդքան լեզուներ գիտենալ, — ասաց սրբազանը մի առանձին բաւականութեամբ: — Դուք, պարոն բժշկապետ, սովորած լինելով արեւելեան լեզուներ, ի հարկէ, ընտելացած կը լինէք եւ արեւելեան սովորութիւններին:

— Այդ դուք տեսնում էք, սրբազան հայր, — պատասխանեց Ասլանը ծիծաղելով, — տեսնում էք՝ ինչպէս ծալապատիկ նստած եմ մինդարի վրայ:

Սրբազանը նոյնպէս ծիծաղեց:

Մի մանկահասակ պատանի, լաւ հագնուած, բաւական գրաւիչ դէմքով, ներս մտաւ, մի ձեռքում բռնած արծաթեայ փոքրիկ սրճամանը, միւս ձեռքում՝ արծաթեայ փոքրիկ մատուցարան, որի վրայ դրած էին երկու չինական ֆինջաններ, նոյնպէս արծաթեայ տակերի մէջ: Այդ բոլոր հրապուրիչ անօթները, անուշահոտ ըմպելիքով, չափազանց մաքրութիւնից փայլում էին: Պատանին ծանրութեամբ մօտեցաւ, ածեց սեւ հեղուկը, նախ տոեց հիւրին եւ ապա սրբազանին: Սուրճից յետոյ մի այլ պատանի ներս բերեց ար-